Մենք նստեցինք վարպետ Փանոսի ձիերի վրայ եւ սկսեցինք դիմել դէպի քաղաքը: Այսօր մեզ հետ ղավազներ չկային, ես եւ Ասլանը միայնակ էինք: Ճանապարհին նա կրկին զգուշացրեց ինձ, որ չմոռանամ իմ դերը...

Հայոց առաջնորդարանը կից էր Սուրբ Նշան եկեղեցուն:

Հոգեւոր առաջնորդի բնակարանը, թէեւ փաշայի ապարանքի շքեղութիւնը չունէր, բայց իր բնաւորութեան կողմից շատ նման էր նրան: Ճանազանութիւնը նրանումն էր միայն, որ այստեղ չկային ներքինիներ, սեւամորթ ստրուկներ, չկար եւ յարեմ: Բայց այստեղ եւս կար բանտ, այստեղ եւս մարդիկ տուգանքի էին ենթարկւում, այստեղ եւս կաշառակերութիւնը խեղդում էր, սպանում էր ամէն արդարութիւն:

Երեւում էր, որ նորին սրբազնութիւնը գիտէր պահպանել իր դիրքի բարձր նշանակութիւնը: Մի խումբ ծառաներ դուրս թափոեցան, մեր ձիաները բռնեցին, մեզ տարան առանձին ընդունարանում, բայց տասն րոպէից աւել սպասել տոին, մինչեւ պատիւ ունեցանք ներկայանալու:

Ասլանը մօտեցաւ համբուրելու սրբազանի աջը, բայց նա թոյլ չտոեց, միայն սիրալիր կերպով սեղմեց իր այցելոի ձեռքը, յետոյ շատ քաղցրութեամբ տեղ ցոյց տոեց իր աջ կողմում, բոլորովին իր մօտ:

Ասլանը նստեց, իսկ ես նրա աջը համբուրելուց եւ օրհնութիւնը առնելուց յետոյ, կանգնած մնացի ոտքի վրայ:

Սենեակի յատակը ամբողջապէս ծածկոած էր գեղեցիկ գորգերով: Եւրոպական կարասիք, որպէս ամէն տեղ այդ քաղաքում, նոյնպէս եւ այստեղ չկային, միայն սենեակի պատուաւոր մասնում, այսինքն մուտքի հանդէպ, գորգերի վրայ տարածոած էր մի փափուկ մինդար, որ պատած էր սեւ թաւիշով. նրա վրայ նստած էր սրբազանը, նրա վրայ նստացրեց նաեւ իր հիւրին: Յիսուն տարեկան հազիւ կը լինէր սրբազանը, միջահասակ մարդ էր փառաւոր սեւ մօրուքով, որ դեռ նոր էր սկսել ճերմակել, եւ ծանր, լուրջ նայուածքով, որբ խիստ յարմարւում էր նրա աստիճանին: Գլուխը սովորաբար փոքր-ինչ կորացրած էր բռնում եւ տակից նայելու համեստութիւնն ունէր: Հագել էր երկար, ընդարձակ փարաջայ սեւ ատլասից, որի մետաքսեայ կարմիր աստառով պատած լայն թեւքերը երեւան էին հանում նրա գեղեցիկ թեւնոցները, որ պատրաստոած էին վարդագոյն թաւիշից եւ կապոած էին արծաթեայ կոճակներով: Աջ ձեռքում բռնած ունէր երկար «տեր-ողորմեաէ դեղին սաթից, խոշոր հատիկներով, որի մի մասը փաթաթել էր բազուկի վրայ: ճկոյթի վրայ փայլում էր եպիսկոպոսական ոսկի մատանին, ահագին վար-